ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԵԼՔ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԴԱՎԻԹ ԽԱԺԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Խաժակյան.

Ի պատասխան Ձեր՝ 25.10.2017թ. հ.Ե-2/33 գրության, տեղեկացվում է.

Երևան քաղաքում գույքահարկի գումարների հավաքագրումն ու գանձումն իրականացվում է՝ (Ձեր կողմից ներկայացված գրության կետ 1.)

- *վճարումների կանխիկ ընդունման միջոցով՝ վճարումների ընդունման անդորրագրերով.*
- *բանկային, փոստային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների միջոցով.*
- *առցանց էլեկտրոնային եղանակով՝ Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքի (www.yerevan.am), պետական վճարումների էլեկտրոնային համակարգի (www.e-payments.am), Իդրամ վճարային համակարգի (www.money.idram.am) միջոցով:*

Ձեր կողմից ներկայացված գրության կետ 2-ի և կետ 3-ի վերաբերյալ տրամադրվում է 2010-2017 (առ. 31.10.2017թ.) թվականների ընթացքում փաստացի հավաքագրված՝ այդ թվում նաև կանխիկ եղանակով գանձված, գույքահարկի գումարների վերաբերյալ տեղեկատվությունը:

հազար դրամ

հարկատեսակ	փաստացի հավաքագրված՝ 2010-2017թթ.							
	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.
ընդամենը գույքահարկ	7,554,339.8	8,021,503.4	8,052,324.5	8,352,159.1	9,176,770.8	9,628,942.4	10,121,836.6	7,449,204.3
որից՝ կանխիկ եղանակով	2,065,471.6	2,320,952.5	1,999,103.6	2,029,847.1	2,096,543.6	2,169,458.9	2,210,074.4	1,440,005.8

Գրության կետ 4-ի կապակցությամբ հայտնում եմ, որ վարչական շրջանների եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժինների կողմից իրականացվում են՝ եկամուտների հաշվառման, հավաքագրման, ֆիզիկական և իրավաբանական անձանց սպասարկման գործառույթները:

Ինչ վերաբերում է գրության 4-րդ կետի 2-րդ պարբերությամբ հայցվող տեղեկատվությանը՝ Ձեզ է տրամադրվում Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի, բաժնի պետի տեղակալի, բաժնի գլխավոր մասնագետի, բաժնի առաջատար մասնագետի, բաժնի առաջին կարգի մասնագետի համայնքային ծառայության պաշտոնի անձնագրերը՝ հաստատված Երևանի քաղաքապետի 2009 թվականի հուլիսի 29-ի N 7149-Ա որոշմամբ: Երևան քաղաքի մյուս վարչական շրջանների աշխատակազմերի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժինների համայնքային ծառայողները ևս առաջնորդվում են վերոնշյալ որոշմամբ հաստատված համայնքային ծառայության պաշտոնի անձնագրերով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ